

# ՊԱՏՄ. ՕՐԵՐ ԵՐԵՒԱՆԻ ՈՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ

## ՅՈՅՑԵՐ ՈՒ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ՄԵԾ ԹԱՓՈՎ

ՄՈՍԿՈՒԱՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԵԱՆԱՏՈՒՆԵՐ ԿԱՌԱՔԷ ԶԱՅԱՍՏԱՆ ՀԵՆՐԻԿ ՊՕՂՈՍԵԱՆ ԿԸ ՓՈՆԱՐԻՆԷ ՊՈՐԻՍ ԳԷՈՐԳՈՎԸ

Յիրաւի, պատմական օրեր կ'ապրի հայութիւնը. 11 փետրուարին Ղարաբաղի Ինքնավար Մարզի ղլխաւոր քաղաք Մտեփանակերտի մէջ սկսած փոքր ցոյցերը, որոնց ընթացքին չըջան ըրեր էին բազմաթիւ թուրքիկներ, չըջարեւականներ եւ հանրազրութիւններ, յաջորդող օրերուն հետզհետէ թափ ստանալով տարածուեցան նաեւ Խ. Հայաստանի ու յատկապէս մայրաքաղաք Երեւանի մէջ, Լեւոնային Ղարաբաղը մայր հանրապետութեան՝ Խ. Հայաստանին վերակցելու պահանջին համահայկական բնոյթը շեշտելով:

Միջազգային լրատու կարեւորագոյն դորձակալութիւններէն ԱՅՓ, ԹՎԱՍ, ՌԷՕԹԸՐ եւ ուրիշներ, ինչպէս ձայնասփիւռի ամէնէն ազդեցիկ կայաններէն ՊԻ. ՊԻ. ՍԻ., «Ամերիկայի ձայն» եւ ուրիշներ, անցնող երեք օրերուն կարեւորագոյն տեղ յատկացուցին համահայկական այդ պահանջին, իրենց լրատուութեանց թէ մեկնարանութեանց ընթացքին: Ու թէեւ արեւմտեան լրատու դորձակալութիւնները իրենց լրատուութեանց մէջ դրեթէ միշտ կը յենէին այլախոհական ազդիւրներու վրայ, սակայն լայն տեղ կուտային նաեւ սովետական պաշտօնական ազդիւրներուն ու լուրերուն:

Երկուշաբթի եւ Երեքշաբթի օր Երեւանի մէջ տեղի ունեցած ցոյցերէն ետք, որոնց ընթացքին Կ. Դեմիրճեան հեռուստատեսութենէն ելոյթ ունենալով վստահութիւն յայտնել էր որ հարցը համբերութեամբ կարելի է կարգադրել, պայմանաւ որ հանդարտութիւն տիրէր հանրային կեանքին մէջ, Զորեքշաբթի երեկոյեան հսկայ եւ 1965ի Ապրիլի 2էն ասդին ամենադանդուածային ցոյցը տեղի ունեցած է Երեւանի մէջ, ըսկըսելով օտերայի հրապարակէն: Ու մինչ կուսակցական եւ հանրապետական պատասխանատուներ բարձրախօսով խօսք առած են ցուցարարներուն առջեւ՝ շեշտելով խաղաղ բնոյթը ցոյցին եւ ապա պահանջը հայութեան, օտար ազդիւրներ 120.000 հաշուած են ցուցարարներուն թիւը, հիմնուելով ընդհանրապէս այլախոհական չըջանակներու հայթայթած տեղեկութեանց վրայ: Այս թիւը «մեծապէս չափազանցուած» նկատուած է Մոսկուայի մէջ, արտաքին գործոց փոխ-նախարար Կեննատի Կերասիմովի կողմէ, որ հարցապնդումի ենթարկուել էր մամլոյ օտար թղթակիցներուն կողմէ:

Նոյն օրը, Զորեքշաբթի, առաւօտեան, «աշխատանքային անբաւարար դորձուէութեան» համար պաշտօնէ ազատ արձակուած էր Ղարաբաղի Ինքնավար Մարզի Համայնավար կուսակցութեան քարտուղար Պորիս Գէորգովը, որ 15 տարի է ի վեր կը վարէր այդ պաշտօնը, փոխարինուելով մարզային Խորհուրդի փոխ-նախագահ Հենրիկ Պօղոսեանով: Նախապէս, յիշեցման կարգով ըսենք, Ղարաբաղի երեսփոխանական ժողովը, որ 140 անդամ կը հաշուէ, 120 թեր, 13 դէմ եւ 7 ձեռնպահ ձայնով վաւերացուցեր էր որոշում մը, որ խորհրդային կեդրոնական

ըշխանութենէն կը խնդրէր Ղարաբաղի վերակցումը Խ. Հայաստանին: Որոշումը հրատարակուել էր տեղական «Սովետական Ղարաբաղ» պաշտօնաթերթին մէջ:

Երեքշաբթի օր, սակայն, Խ. Միութեան Կեդրոնական Կոմիտէն մերժել էր այդ պահանջը, պնդելով թէ «Գերագոյն Խորհուրդը ազգային կառոյցի եւ սահմաններու վերատեսուելիւնը համապատասխան չի դտներ Ատրպէյճանի ու Հայաստանի աշխատաւորներուն շահերուն»: Միւս կողմէ, ըստ ԹՎԱՍ-ի մէկ հաղորդագրութեան, Կեդր. Կոմիտէն նկատել կուտար թէ «հանրային կարգ ու կանոնի խախտումի հրահրուած է ծայրայեղ եւ անպատասխանատու անհատներու կողմէ», եւ կը պահանջէր «ազդու միջոցառումներ»՝ ցոյցերուն վերջ տալու համար:

Միւս կողմէ, Խ. Հայաստանի Կենտկոմի պաշտօնաթերթ «Կոմունիստ» ռուսերէն օրաթերթը Երեքշաբթի օր հաղորդած է, ըստ արեւմտեան ազդիւրներու, թէ Հայաստանի Կենտկոմը իր հերթին որոշում ընդունած է խնդրելու՝ որ Ղարաբաղի վերակցման հարցը օրակարգի նիւթ դառնայ Խ. Միութեան Համայնավար կուսակցութեան Կենտկոմի յառաջիկայ նիստերէն մէկուն ընթացքին: Եւ արդէն, միշտ ըստ միեւնոյն ազդիւրներուն, ղլխաւոր քարտուղար Միխայիլ Կորպաչով անցեալ շաբաթ յայտարարել է, թէ Կենտկոմը իր յառաջիկայ նիստերէն մէկը պիտի յատկացնէ խորհրդային ազդութիւններու հարցին:

Իր հերթին, խորհրդային կառավարութեան կեդրոնական օրկան «Իզվեսթիան» իր Երկուշաբթի օրուան թիւով վկայակոչել էր Փոլիթպիւրոյի անդամներէն Կէորկի Ռազումովսքիի մէկ յայտարարութիւնը, թէ «հայկական ազգայնականութեան բռնկումը կրնայ լուրջ հետեւանքներ ունենալ՝ եթէ ժամ առաջ ձեռք չառնուին ազդու միջոցներ»: Թերթը իր կողմէ աւելցուցեր էր, թէ Լեւոնային Ղարաբաղի անջատումը Խ. Ատրպէյճանէն կրնայ ծանր հետեւանքներ ունենալ տեղոյն ազգաբնակչութեան համար, նկատի ունենալով որ տնտեսական, մասակարարման եւ ուժանիւթային իմաստով Ղարաբաղը սերտօրէն կապուած է Խ. Ատրպէյճանին...

Երեքշաբթի գիշեր, Փոլիթպիւրոյի երկու պատասխանատուներ՝ Կէորկի Ռազումովսքի եւ Փիոթր Տեմիչեւ ժամանած են Հայաստան՝ խորհրդակցութիւններ ունենալու համար տեղոյն պատասխանատուներուն հետ: Տեմիչեւ նոյն օրը ելոյթ ունեցած է հայկական պատկերասփիւռէն՝ կարգի հրահրելով ցուցարար բազմութիւնները:

Կը թուի թէ Զորեքշաբթի օրուան ցոյցերը պատասխանը կը հանդիսանան այս բոլոր նախազգուշացումներուն: Եւ սակայն, պէտք է կարեւորութեամբ շեշտել, թէ ցուցական բոլոր ելոյթները տեղի կ'ունենան հանդարտ մթնոլորտի մէջ:

Հայութիւնը արտասահմանի մէջ մեծ հետաքրքրութեամբ եւ շահագրգռուածութեամբ կը հետեւեր պատմական այս զարգացումներուն: